Կայ և անճաշակ արձանագրութիւն մի ի լեզու լուսիտանացւոց, այսպէս։

Acuista sopultado ocorpo de Gabriel Joannes nacao Armenio de idade LXVIII an... sonoual iadeceoa XI del anetroanio domino MDCCLXXXII.

որ թարգմանի այսպէս.

Աստ թաղեալ կայ մարմին Գաբրիէլի Յովհաննիսեան հայազին, ի հասակի 68 ամաց, յամի Տեառն 1782։

Կայ ի նմին եկեղեցւոջ և տապանաքար մի Հայ, Լատին և Յոյն արձանագրութեամբ, ննջեցեալն գոլով ազգաւ Յոյն և դաւանութեամբ կաթոլիկ։

Լատին տապանագիրն է այսպէս.

Hic jacet Georgius Johannis Drascoela nationis Graecus ex Plilippopole. Anno Domini MDCCXXVIII die XX Augusti.

Իսկ Հայ արձանագրութիւնն է ըստ օրի նակիս ըստ այսմիկ.

Այս է տապանս Յովանիսի որդի Ջուջինին Դրասկոլու Ֆիլիպեցի, թիվն ՌԷՃԻԸ, ՕԳՈՍՏՈՍԻ Ի.

Այլ թէ ընդէ՞ր տեսանի և Հայ արձանագրութիւն ի վերայ տապանաքարի օտար ննջեցելոյն, կարելի է թէ կին նորա և կամ կտակակատարն լեալ իցեն յազգէս Հայոց, զի զայնու ժամանակաւ սակաւաթիւ Յոյն բնակիչք քաղաքիս ունէին սերտ յարաբերութիւն ընդ Հայս, յիրս տուրեւառութեան, որովհետեւ Հայք էին առաջնակարգ վաճառականք ի քաղաքիս մեծի և Յոյնք վարէին զտուրեւառ իւրեանց հզօր աջակցութեամբ նոցին։

Կայ ի նմին եկեղեցւոջ և շիրիմ մի այլ Յոյն կաթոլիկ ննջեցելոյ՝ Նիկոլա Քրիստիանիտզա անուն, ծնեալ ի Թրանսիլվանիա և վախճանեալ ի Կալկաթա յ'17 Օգոստոսին, 1713 ամին, ի հասակի 37 ամաց անկեղծ հաւատով յԱստուած և ուղիղ ի գործառնութիւնս ընդ մարդկան – vir sincerae fidei Deum et in homines», *ըստ լատին արձանագրութեանն։ Հնագոյն շիրիմն յայդմիկ եկեղեցւոջ կրէ զթուականն* 1712 *և է ի յիշատակ երկոտասանամեայ դստեր ուրումն Եղվարդայ Տէնզի, որոյ բարեպաշտոն կին, Մարիա Տէնջ, կառոյց զնախկին եկեղեցին յամին* 1700, *որպէս յիշատակեալ եմ արդէն յսկզբան գրութեանս։*

Հրատարակելով աստ զՀայ տապանագիրսն, որք ցարդ անծանօթ մնացեալ էին, նպատակ իմ լեալ է նախ փրկել զայնս ի մոռացութենէ, զի ոչ ոք ի հնոց և ի նորոց գիտէր զգոյութենէ նոցին, և յետոյ ի լոյս ածել զանուանս երկու ազգային բարեբարացն, զի Յովսէփ և Զաքարիա Շահրիմանեանք, որք ննջեցին զնինջն յաւիտենից աստ ի Կալկաթա ամին 1763 *և* 1764, (*տեսանել զթիւս* 9 *և* 10 *արձանագրութեանցն*) *էին ոսկեձեռն Մեկենասք տպագրութեան Զամչեանի եռահատոր «Պատմութեանն Հայոց», ի ճակատի որոց տեսանին անուանք անմահ բարեբարացն յիշատակելք այսպէս.*

«Ծախիւք բարեպաշտոն և քաջատոհմիկ Շահրիմանեանց երկուց եղբարց հարազատաց՝ Բարաղամեան Պարոն Յովսէփին և Պարոն Զաքարին»։

Որպէս զրէի երբեմն՝ «եթէ լաւ և երջանկայիշատակ հայրենակիցք իմ պայազատ Շահրիմանեանք չէին Մեկենասք հանդիսացեալ տպագրութեան հսկայ և բազմաքիրտն աշխատութեան բարեյիշատակ Զամչեան Հօր, այսօր չկարէաք մեք պարծել ճոխ և մանրապատում ազգային Պատմութեամբ՝ յերիս մեծ հատորս»։ (*Տեսանել էջ* Թ, «*Պատմութեան Հին Հայ Տարազին*» *Հայր Վարդան Հացունւոյ տպագրեալ ի Վենետիկ, յամին* 1924)։

Հնութեանց հոյակապ Հնդկահայոց համեստ հետախոյզ՝



ի Կալկաթայ Հնդկաց
ի 14 *Յունուարին*, 1938։